ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ք.Եղեգնաձոր 03 օգոստոսի 2017թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը և հանձնաժողովի անդամները:

Նիստին հրավիրված են մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ. Գևորգյանը, վարչության պետի տեղակալ Լ.Կարապետյանը, Եղեգնաձորի զբաղվածության կենտրոնի գլխավոր մասնագետ Ս.Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Զբաղվածության պետական ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրվածության մասին:/Ս.Ավետիսյան/

2. Պետական պատվերի շրջանակներում հաշմանդամներին ցույց տրվող բուժօգնության և նրանց դեղորայքով ապահովելու վիճակը մարզի բուժ.հաստատություններում:/Լ.Կարապետյան/

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքը: /Մ.Հարությունյան/:

4.Ներառական կրթության մասին /մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյան/

5.<< Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթի մասին /Ա.Հովհաննիսյան/

4. Կազմակերպչական այլ հարցեր

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մարզի լրատվամիջոցների, համայնքապետարանների հետ համատեղ հրապարակային լուսաբանել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրերը:/Ց. Բաբայան/

2. Հսկողություն սահմանել պետական պատվերի շրջանակներում հաշմանդամներին ցույց տրվող բուժօգնության և նրանց դեղորայքով ապահովելու գործընթացի նկատմամբ/Լ. Կարապետյան/:

3. Հսկողություն սահմանել ներառական կրթության կազմակերպման ուղղությամբ /Ա.Գրիգորյան/:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Քարտուղար Ց.Բաբայան

03.08.2017թ.